բը անհաւասար կռիւ մղելով իրենցից տասնապատիկ աւելի մահմեդականների գերազանց ոյժերի դէմ, թէև ընկան ընկճուած և անճարացած, բարբարոս մահմեդականների կրօնն ընդունեցին, նրանց լեզուն գործածեցին, նրանց նիստ ու կացի հետ ընտելացան, բայց իրենց նախնիքների ու պապերի քրիստոնէական և զուտ հայկական նշանակալից և խորհրդաւոր անուններն ու սովորութիւնները անփոփոխ և անկորուստ պահպանեցին մինչև մեր օրերը։ Մահմեդականացած Հայ գիւղերի նախնեաց ազնիւ սիրան ու հոգին մեծ արժէք և բարձր նշանակութիւն ունի մեր աչքում այն պատճառով, որ այդ նահատակ մարտիրոս ժողովրդի նոյն իսկ թրքացած և վաղուց կուլ գնացած կրօնամոլ զաւակները անփոփոխ և անկորուստ պահեցին ոչ միայն դարերից ի վեր իրենց ընակած գիւղերի զուտ հայկական անունները *), այլ և քրիստոնէական սրբավայրերն ու սրբազան սովորութիւններից շատերը։ Ահաւասիկ ձեզ, մահմեդականութիւն ընդունած մի շարք Հայ գիւղեր, որոնք մինչև ցարդ մնացել և մնում են անփոփոխ՝ նախկին զուտ հայկական հնադարեան անուններով, նոյն իսկ մահմեդականացածների և բուն մահմեդական լեռնականների շրթունքներում։ Օրինակի համար. 1. Խաչ-մաս,—որ նշանակում է խաչի մասունք կրող։ 2. Վանտամ—ընակարան կամ իջևան տալ։ 3. Վարդանլու—

---

*) «Աղուանից երկիր», տես, երես 290։